respected. With regard to the Turkish security officers, he added: "I have reason to expect that these people, who have been incriminated by the American criminal justice (system) will not step onto German soil in the foreseeable future, including during the G20 summit."

\$80 Thousand Raised for SMART Center Library in Armenia



NEW YORK -- Children of Armenia Fund (COAF), a nonprofit organization whose goal is to better the lives of rural Armenian children, held its 7th Annual Summer Soiree on June 20th at the popular PHD Rooftop Lounge at the Dream Hotel Downtown. 250 guests attended the event along with special guests including Tony Shafrazi, Patricia Field, Edward Barsamian, Tigran Tsitoghdzian, Armen Keteyan. The annual summer fundraiser raised over 80 thousand for a new high tech library, part of COAF's SMART Initiative, intended to make a lasting impact on education in rural Armenia.

"Every one of you counts in trying to bring the rural people of Armenia back up to where they deserve to be, so we are counting on you," said Dr. Garo H. Armen, COAF's Chairman and Founder, after discussing COAF's SMART initiative and its expected impact on rural youths and their family's lives.

A SMART Center Library is an innovative open-concept area that houses technological educational resources and reading materials.

SMART Library will be equipped with latest digital media and global subscriptions, as well as access to a broad array of information, services, data, and audio-visual content. It will be a place to both read and think – where group discussions are fostered, research is done, and big ideas are born.

The technology within will provide a link to the vast field of knowledge able to be grasped beyond the chalkboard of previous rural Armenian classrooms. The SMART Center is intended to be a window for kids and their families into a different world; one in which they can see a brighter future. COAF's SMART Initiative is predestined to improve education, health, recreational, social and economic conditions in rural Armenia.

Ararat Home Receives Prestigious National Quality Award



MISSION HILLS, CA – Ararat Home proudly announces that Ararat Nursing Facility has been recognized as a 2017 recipient of the Bronze - Commitment to Quality Award for its dedication to improving the lives of residents through quality care and performance excellence.

This national award has been presented annually since 1996 by the American Health Care Association and National Center for Assisted Living, the leading association for long-term and post-acute care that represents more than 13,000 care facilities. The National Quality Award Program has three progressive levels: Bronze, Silver and Gold. The awards recognize those member facilities that demon-

strate a strong commitment and progression in their quality efforts towards delivering ever-improving value to residents and families as well as improving overall organizational performance.

"We are honored to be recognized for our continuous commitment to delivering quality care," said Nursing Facility Executive Director Margarita Kechichian. "I am proud of the entire Nursing Facility team for its ongoing, daily efforts in quality improvement that yielded the recognition of this award." Ararat Home Board of Trustees Chair Michael Surmeian expressed gratitude to all staff, volunteers and supporters for their unparalleled devotion to Ararat Home's mission of care.

San Diego's 5th Bridge to the Future Gala Set for September 30th

SAN DIEGO, CA

-The 5th Bridge to the Future Gala Dinner & Dance will be held on September 30, 2017 at the picturesque Sheraton Hotel & Marina Bay Tower. The theme, "Carnival in Venice," sets the stage for an evening inspired by the romance of Italy. The Trust Fund Committee of St. John Garabed Armenian Church is organizing the event under the auspices of Parish Priest Very Rev. Fr. Pakrad Berjikian.

The goal is to raise \$150,000 to begin the construction of a new church campus near Del Mar, California. Table sponsorships are available for \$10,000, \$5,000, \$3,000, \$2,000 and \$1,000, with generous donor benefits for each level. Individual tickets are \$250 per person. A portion of the ticket price is tax-deductible.

Dan Cohen, co-anchor of CBS News 8 This Morning and CBS News 8 at 11 a.m., will be the Master of Ceremonies and Auctioneer. Dan has been honored with three Emmy Awards for his exceptional journalism and is beloved throughout San Diego. It's Dan's second year hosting this event. He is a close friend of San Diego's Armenian community and a passionate supporter of the new church campus.

Chairwoman Suzanne Meader has assembled a dedicated committee of



volunteers who are planning an exceptionally elegant and memorable evening.

The Bridge to the Future project will establish a state-of-the-art church campus that will be a new spiritual and cultural home for the Armenian community of San Diego as well as a destination for Armenians worldwide.

Harry Krikorian, chairman of the Trust Fund Committee, stated, "We are excited to once again be hosting the Bridge to the Future Gala in San Diego. We feel it's realistic to expect to break ground in the fall. The Parish Council has already appointed a Building Committee, and we are working with a civil engineer to submit grading plans to the city. This project is all about our kids, and providing the next generation with a place for learning, growing, worship and fellowship."

For information about the Gala, event donations, or ticket sales, email sjgsdtrust@gmail.com or visit <http://www.stjohngarabed.org>

Armenian Film Society to Screen Experimental Documentary Planet Zorthian

GLENDALE – Abril Bookstore's Armenian Film Society will present a screening of the experimental "cubist" documentary, Planet Zorthian followed by a discussion with filmmakers Arno Yeretian, Harout Arakelian, Lisa Tchakmakian and Sevag Vrej on Friday, July 7, 2017 at 7:30pm at Abril Bookstore - 415 E. Broadway, Glendale, CA. Admission is free.

Planet Zorthian is an experimental "cubist" documentary created by four filmmakers primarily at the Zorthian ranch, an ongoing work of art created by Jirayr Zorthian, encompassing his artwork, the architecture, the livestock, the found objects, and the lives of the residents, including that of Jirayr and his wife Dabney. The documentary also calls to attention the individual subjective viewpoints of the filmmakers through their unique portrayals and interpretations. The beginning and end of the unified piece are created in collaboration and present the annual events of

"The Blessing of the Animals" and the "Primavera" celebrations.

Jirayr Zorthian was a larger-than-life figure. Being a survivor of the Armenian Genocide, he lived his life to the fullest as an artist, architect, athlete, and host to many different eccentric parties, especially towards the end of his life, as he took on the character of Zor-Bachus with naked nymphs dancing around him. Born in 1911 in Kutahya, Turkey, Zorthian survived the Genocide and settled with his family in New Haven, Connecticut. After graduating from Yale he was granted a fellowship to study abroad and traveled around Europe and North Africa in the 1930s, studying art and architecture. He returned to participate in Franklin Roosevelt's WPA projects for artists, becoming a muralist. His 42 murals survive to this day in State capitals and in Post offices around the U.S. Jirayr moved to Los Angeles in the 1940s with his first wife where they purchased 27 acres in the foothills of Altadena.

Armenia and Artsakh Refute Azeri Claims

Continued from page 1

Hovhannisyan told Panorama.am.

For his part, Davit Babayan, spokesperson of the Artsakh Republic President stated. "Through disseminat-

ing false reports about subversive attacks allegedly planned by Armenian forces Azerbaijan is trying to save its face and wounded pride. These fabricated reports serve a purpose to show the domestic population."

ԿԱՐԵՒՈՐ ՄՏԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրաչ Չիլինկիրեան կը մեկնաբանէ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան առջեւ ծառայած երկու հիմնական խնդիրները՝ անվտանգութիւն եւ գաղթականութիւն:



ԱՆՈՒՇ ԹՐՈՒՄՏՅՈՒՆ

«Աւրորա երկխօսութիւններ-2017» նախագծի ծիրէն ներս՝ «Պատերազմները, կրօնական ծայրայեղութիւնները եւ ապագային սպասուող մարտահրաշարները Մերձաւոր Արեւելքի մէջ Արեւելեան Քրիստոնէութեան համար» թեմայով, վերջերս, Երեւանի Պետական համալսարանին մէջ դասախօսութիւն ունեցաւ ծանօթ գիտնական, Օքսֆորտ համալսարանի դասախօս՝ Հրաչ Չիլինկիրեան:

Տ.թ. Հրաչ Չիլինկիրեան խօսեցաւ այն կարեւոր մարտահրաշարներուն մասին, որոնք այսօր ծառայած են քրիստոնէայ համայնքներուն առջեւ՝ Մերձաւոր Արեւելքի մէջ ընթացող պատերազմներուն, կրօնական ծայրայեղութիւններուն, միջհամայնքային անվտանգութիւններուն, ցեղասպանութեան, ընկերային-տնտեսական անկման եւ բնակչութեան գաղթին եւ տեղաշարժներուն համատեքստին վրայ:

Իբրեւ ընկերաբան Հրաչ Չիլինկիրեան վերջին տարիներու իր ուսումնասիրութիւններուն մէջ եւ հանրային ելոյթներուն ընթացքին ուշադրութիւն հրաւիրած է Մերձաւոր Արեւելքի մէջ քրիստոնէայ համայնքներուն եւ փոքրամասնութիւններու իրադրութեան վրայ, մանաւանդ գիտական եւ քաղաքական որոշումներ կայացնողներու շրջանակներէն ներս: Որպէս մտաւորական իր ուսումնասիրութիւններուն, միտքերուն եւ ծրագրերներուն նպատակն է, մանաւանդ Սփիւռքի համար, ազգային ինքնութիւնը, մշակոյթը եւ լեզուն դարձնել առօրեայ ապրում իրականութիւն:

Հրաչ Չիլինկիրեան հանդիպումներ եւ ելոյթներ ունեցաւ նաեւ Արցախի մէջ, ուրկէ վերադարձին Երեւանի մէջ պատասխանեց ԺԱՄԱՆԱԿ-ի հարցումներուն:

-Այսօր Միջին Արեւելքը, ուր տեղի ունեցող խնդիրներուն մասին խօսեցաք, աշխարհի թէ՛ կ'որ կը սեպտեմբ, որուն վրայ կը «բարախի» աշխարհի սիրտը:

-Այո, եւ այդ տարածքաշրջանին առնչուող իմ ուսումնասիրութիւններու հիմնական կեդրոնը քրիստոնէայ համայնքներն ու ոչ-խալամ փոքրամասնութիւններն են: Եւ եթէ այդ մը նետենք այս վերջին տարիներուն տեղի ունեցող պատերազմներուն, իրադարձութիւններուն, լուրջ խնդիրներ դրուած են քրիստոնէայ համայնքներուն առջեւ: Գաղտնիք է, որ քրիստոնէայ համայնքները կը նօսրանան ընդ-

հանրապէս Մերձաւոր Արեւելքի մէջ: Անշուշտ, ես այն կարծիքին չեմ, որ լրիւ պիտի վերանան այդ համայնքները:

-Բայց յաճախ լուրեր կը տարածուին, որ յատուկ նպատակ մը կայ Մերձաւոր Արեւելքի մէջ քրիստոնէութիւնը բնաջնջելու, այդ մասին ի՞նչ կ'ըսէք:

-Ես չէի ըսեր՝ յատուկ քաղաքականութիւն է: Անշուշտ, իսլամական ծայրայեղութիւնը իր գաղափարախօսութեան մէջ ունի Միջին Արեւելքը մաքրել ոչ-խալամական տարրերէ, այդ իմաստով իրենց գաղափարախօսական կամ «ասունաձաբանական» բացատրութեան մէջ այդ մէկը կայ: Բայց չեմ կարծեր, որ այդպէս ծրագրուած բան մըն է, եւ պետութիւններ նստած եւ ծրագրած են քրիստոնէութիւնը ի սպառ վերացնել: Անշուշտ, վտանգը եղած է եւ տակաւին կայ:

Այսօր երկու հիմնական խնդիր կայ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան առջեւ: Առաջինը՝ ապահովութեան եւ անվտանգութեան խնդիրն է: Եւ այստեղ, ըստ գոնէ իմ ուսումնասիրութիւններուս, անապահովութեան հիմնական երեք մակարդակներ կան. մէկը Ֆիզիքական ապահովութեան, անվտանգութեան խնդիրն է: Մարդիկ գոյութենական խնդիր ունին այնտեղ՝ ռուսներու, կրակոցներու տակ անոնք պէտք է իրենց կեանքը ապահովեն կամ փրկեն:

Անապահովութեան երկրորդ մակարդակին վրայ կայ ընկերային-տնտեսական ապահովութեան խնդիրը: Այսինքն այս պատերազմները, բարտաւերները վերջին վեց-եօթ տարիներու ընթացքին այնպիսի իրավիճակ մը ստեղծած են, որ տնտեսութիւնները՝ մանաւանդ Սուրիոյ եւ Իրաքի մէջ լրիւ անկումի մէջ են, մարդիկ աշխատանք չունին, գործատեղիներ կորսուած են, եկամտաբեր աղբիւրները չքացած են եւ այլն, եւ այլն:

Իսկ երրորդը, որ քիչ մը աւելի երկարաժամկէտ ապահովութեան խնդիր է, այն ալ՝ մշակոյթի եւ կրօնի անվտանգութեան խնդիրն է: Այսինքն այդ տարածքաշրջանին մէջ, մանաւանդ իսլամական ծայրայեղութեան պարունակին մէջ նաեւ լուրջ խնդիր է կրօնական ազատութեան հարցը, եւ փոքրամասնութիւնները, մանաւանդ քրիստոնէաները իրենց հաւատքը, կրօնը ու մշակոյթը պահպանելու եւ ազատօրէն գործածելու անմիջական հարց ունին: Ապահովական այս հարցերն են, որ այսօր կը դիմադրուէ Մերձաւոր Արեւելքի

քրիստոնէայ բնակչութիւնը:

Միւս՝ երկրորդ խնդիրը, որ կը բխի այս անվտանգութեան հարցէն, գաղթականութիւնն է, տեղաշարժներն ու տեղափոխութիւնները: Վերջին տասը տարիներու ընթացքին հսկայական արտագաղթ եղած է եւ տակաւին կը շարունակուի: Օրինակ, Իրաքի մէջ մէկ միլիոնէ աւելի քրիստոնէաներ արդէն երկիրը լքած են: Պատերազմէն առաջ Իրաքի մէջ կար մօտ մէկ միլիոն երեք հարիւր հազար քրիստոնէայ, այսօր հազիւ երկու-երեք հարիւր հազար մնացած է ամբողջ Իրաքի մէջ: Թիւերու առումով նոյն նուազումն է նաեւ ուրիշ երկիրներու մէջ:

-Իսկ տարածքաշրջանին մէջ հայութեան տեղաշարժներուն եւ գաղթի մասին ի՞նչ տուեալներ կան:

-Ես փոքրիկ ուսումնասիրութիւն մը ըրած եմ, եւ եթէ բաղդատենք անցնող քառասուն տարիներու հետ թիւերը, կը տեսնենք, որ հայ համայնքները Մերձաւոր Արեւելքի մէջ, վաթսունհինգ տոկոսէ աւելի նուազած են: Այսօր Մերձաւոր Արեւելքի մօտ տասը երկրի մէջ, ուր մեծ թիւով հայ համայնքներ կային, հազիւ մնացած է մօտ երկու հարիւր յսուկ հազար հայութիւն, ներառել Իրանը, Լիբանանը, Սուրիան, Իրաքը, Եգիպտոսը, նաեւ՝ Թուրքիան, եթէ Միջին Արեւելքը նկատի առնենք քիչ մը լայն իմաստով: Երեւակայեցէք, եթէ անասունականներուն, որ հայութեան

թիւնը վեց հարիւր յսուկ-եօթհարիւր հազար էր, հիմա մօտ երկու հարիւր յսուկ հազար է միայն:

-Այս տեղաշարժներու շնորհիւ այդ մարդոցմէ շատ քիչերուն հայեացքը կ'ուղղուի դէպի հայրենիք, այլ երկիրներ կ'երթան անոնք, այդ ալ ուրիշ մտահոգիչ հարց մըն է, քանի որ շայաստանը այսօր ունի ժողովրդագրական խնդիր, եւ լաւ կ'ըլլար, որ անոնք շայաստան գալին, որպէսզի այդ հարցն ալ ձեւով մը լուծուէր:

-Այս մէկը լուրջ հարց է: Անշուշտ, ցանկալի է, որ մանաւանդ Միջին Արեւելքէն մարդիկ Հայաստան գան, որովհետեւ նախ մշակոյթի, միջավայրի եւ այլ նմանութիւններ գոյութիւն ունին, նոյնիսկ աշխարհագրական մօտիկութիւնը կրնայ դեր խաղալ: Բայց քանի որ, ուրիշ գաղթական նախ իր ամէնօրեայ մտահոգութիւնները ունի, իր ու ընտանիքին ամէնօրեայ պէտքերը հայթայթելու անմիջական հարցն ունի, ուրեմն, տեղ մը պիտի երթայ, ուր ինք կրնայ գանոնք ապահովել, պահել իր գաւակներն ու ընտանիքը: Հայաստանը այսօր, այդ, մենք կը ներկայացնենք որպէս մեր ինքնութեան կարեւոր մէկ մասը, կ'առաջարկենք մարդոց, որ գան Հայաստան, ձեւով մը փորձելով անոնց հայրենասիրական զգացումներուն դիմել, բայց միւս կողմէ եթէ անոր առընթեր


Շար.ը էջ 18

JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES

Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճեմի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:


Քաղաքացիութեան Կեդրոն
1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

-Քոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ
-Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...



Jenny Abrahamian
Թարգմանութիւններ՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Ռուսերէն, Պարսկերէն եւ այլն
-Լիազօրագրեր/ Appostille

Ծառայութիւններ
-Հէշ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան թոշակ SSI-SSA
-Medi-Cal
-CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի



Նոտար/Notary
Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին
Ձեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւ այլն)

ՐԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

(Մտքի Գասպար Տրտերեանի յօդուածին առթիւ)

ՂՈՎՏ. ԱԲԷԼ ՔՅՆՅ. ՍԱՆՈՒԿԵԱՆ

Ոսկան Մխիթարեանը հասցե-
խա առաքած էր 26 Մայիս 2017-ին
ստորագրած Ձեր «Ֆրանչիսկոս հո-
գեւորականի հասարակական դիմա-
գիծը» խորագիրը կրող յօդուածը:
Ինչպէս Ձեր շահեկան նա-
խորդ գրութիւնները՝ առկան ալ
ըմբռնչանքի հոգեկան մեծ գոհու-
նակութեամբ: Աստուածաբանու-
թեան գլխապտոյտ պատճառող կա-
տարներ նուաճելէ եւ դարերու
վրայ վարդապետական կարծի
դրոյթներ սահմանելէ ետք, կաթո-
ղիկէ Եկեղեցին պէտք ունէր մար-
դոց սրտին եւ ջերմեռանդ զգա-
ցուններուն մօտէն խօսող հօր մը
կերպարին, որ կարենար իր գոզը
վերադարձնել այն բոլոր «վաս-
տակներն ու բեռնաւորութեան-
քը», որոնք ծայր աստիճան վհա-
տած եկեղեցիի խնկաբոյր կամար-
ներէն ներս սպրդած բազմազան
գայթակղութիւններէն՝ տարուէ տա-
րի անհամեմատելի թիւերով բռնած
էին հեռացումի ճամբան:

Պէտք էր առաջին առնել այս
զարգացումին. հարկ էր կասեցնել
զայն՝ եկեղեցիին համար աննախա-
տեսելի, թերեւս նաեւ վտանգաւոր
իրավիճակ մը գոյանալէն առաջ:
Առ այս, հրամայական կարգախօ-
սը՝ եկեղեցիին հասարակութեան մօ-
տեցնելն էր, փորձել զայն հեղ մը
եւս դարձնել ժամանակահունչ, քա-
ջութիւնը ունենալ՝ ընդունելու սե-
փական կղերին յոռի գեղծումները,
պատժել օրինազանցներն ու, առն-
ուազն, անկեղծ ներողութիւն խնդրել
մանկապղծութեան ենթարկուած
անոնց հին ու նոր գոհերէն:

Սակայն ո՞վ պիտի իրազոր-
ծէր այս առաջադրանքը: Անկարե-
լի էր սոյնը ակնկալել պապէ մը, որ
կրնար Ս. Պետրոսի առաքելական
Աթոռին վրայ օրէ օր աւելի վար-
դապետական դառնալ: Եւ, ահաւա-
սիկ, կաթողիկէ Եկեղեցւոյ ծիրա-
նաւորներու ժողովը իմաստու-
թիւնն ու հեռատեսութիւնը ունե-
ցաւ իր հեղինակաւոր եւ պատկա-
ռազրու կարգինալներուն մէջէն
քահանայապետ ընտրել սրտով ամե-
նապարզն ու խոնարհը՝ յանձին
Պուէնտո Այրէսի թեմակալ առաջ-
նորդ Խորիս Մարիօ Պերկոլիօ
արքեպիսկոպոսին:

Կաթողիկէ Եկեղեցւոյ հինա-
ուորաց աւանդութեան մը համա-
ձայն՝ նորընտիր քահանայապետը
կ'ընդունի նոր պատուանուն մը, որ
կու գայ կերպով մը ուրուագծելու
անոր հոգեւոր առաքելութեան ուղ-
ղութիւնը: Այս առնչութեամբ՝ բո-
լորովին պատահական չէր, որ Խոր-
իս Մարիօ Պերկոլիօ արքեպիսկո-
պոսը կաթողիկէ Եկեղեցւոյ լու-
սապսակ սուրբերու փառանքին մէ-
ջէն, տիեզերական վարդապետնե-
րու՝ Թովմաս Աբուխնացիներու,
Ալբերդ կամ Գրիգոր մեծերու
շարքին, սեփականացուց անունը
համեստագոյն սուրբին՝ Ֆրանչիս-
կոս Ասիզացիին, անոր նման հետե-
ւելով տիրաւանդ օրինակին՝ հաս-
նելու համար ընկերային կեանքի
լուսանցքը մղուած ծանրաբեռն-
ուածներուն, անիրաւուածներուն,
խեղճերուն, աղքատներուն, աշխար-
հի հզօրներուն կողմէ իրաւազրկ-
ուածներուն, փաստօրէն՝ այն
լիւրուածներուն, որոնք, հակառակ
նիւթական ամէն տեսակ կորուստ-
ներու, իրենց տառապահիւժ հոգի-
ին խորքը գերազանցապէս բարձր

կը պահեն մարդկային արժանա-
պատուութեան անկապտելի արժա-
նիքը:

Ֆրանչիսկոս պապը եղաւ հա-
ւատքին եւ կոչումին մարդը: Հոռ-
մէական կաթողիկէ Եկեղեցիին իրեն
շնորհած Աթոռը չէ որ զինք բարձ-
րացուց, այլ այդ Աթոռին քրիստո-
նէական ճշմարիտ առաքելութեան
կատարելապէս համապատասխանե-
լու ծառայասիրական յանձնառու-
թիւնը իր անձին եւ գործին մէջ՝
առաւել եւս նուիրագործեց այդ
Աթոռին հեղինակութիւնը: Պէտք
չէ մոռնալ, որ «պապ» բառին
արմատը յունարէնի «ծՍծծ», իսկ
լատիներէնի «pa'papa» հասկացու-
թիւնները կը կազմեն, որ մեր
մայրենիին մէջ փաղաքշական «հայ-
րիկ» արտայայտութեան կը համա-
պատասխանէ:

Արդարեւ, Ֆրանչիսկոս պապը
դարձաւ, բառին իսկական առու-
մով, հայր մը եկեղեցիին եւ իր
հաւատացեալ ժողովուրդին հա-
մար, գործազուտ հօր մը կերպա-
րը մարմնաւորող ճշմարիտ հեղի-
նակութիւն մը, զոր կը բաղձար
կաթողիկէ Եկեղեցին, եւ թերեւս
չափազանցած պիտի չըլլամ ըսե-
լու՝ ընկերային-հասարակական
կեանքի անարդարութիւններու,
վայրագ պատերազմներու եւ կրօ-
նական տարատեսակ ծայրայեղու-
թիւններու մէջ խրած մարդկու-
թիւնը:

Կաթողիկէ Եկեղեցին ունեցաւ
պապեր, որոնք մարդոց դառնակոծ
արցունքին դէմ կնճռոտ աստուա-
ծաբանութիւն մը՝ եկեղեցական
խրթին օրէնքներու համանուագ-
ներ հանեցին, եւ իրենց բացատ-
րութիւնը դժուարըմբռնելի մնաց
ժողովուրդի պարզ մտքին, առաւել
եւս անգործադրելի՝ առօրեայ կեան-
քին համար: Ի տարբերութիւն
ասոնց, Ֆրանչիսկոս պապը այլ
ուղղութիւն մը որդեգրեց եւ իր
խօսքը դարձուց անմիջական, ջերմ
եւ հայրական: Իր առաքելական
գործունէութիւնը ամենէն ընկե-
րայինը, ամենէն ժողովրդականը՝
մարդոց հետ ուղղակի աւելի զբա-
ղողը, անոնց կեանքի ճամբան ցուց-
նողը, իսկ պատգամը՝ մարդկային
հոգին դժբախտութեան առջեւ
չկրեցնողը, այլ այդ դժբախտու-
թեան մէջ իսկ ազնուամալու, բարձ-
րանալու եւ երջանկանալու միջոցը
գտնել տուողը եղաւ: Զինք անխ-
տիր սիրեցին մարդկային խիղճ եւ
քիչ մըն ալ կրօնական զգացողու-
թիւն ունեցող քրիստոնէան, տա-
ծիկն ու հրեան, նաեւ անոնք, որոնք
այլ կրօնքներ կը դաւանին, կամ
ուրշններ՝ որոնք նոյնիսկ կը մերժեն
զանոնք: Պետական այլեր ակնա-
ծանքով գնահատեցին զինք, որով-
հետեւ ան շատերուն սրտի պապը եւ
եկեղեցիին ընտանի հայրը դարձաւ:

Եկեղեցին, ամէն բանէ առաջ,
հոգեկիր հայրերու պէտք ունի՝ ո'չ
պապերու, ո'չ կաթողիկոսներու եւ
ոչ ալ պատրիարքներու: Մեզի
լուսատեսիլ եւ շնորհալի հայրա-
պետեր են պէտք՝ ո'չ թէ պաշտօնա-
կատարներ: Արդարեւ, օտարամուտ
«կաթողիկոս» բառին փոխարէն՝
աւելի գեղեցկահունչ չէ՞ մեր մայ-
րենիին հայրապետ բառակապակ-
ցութիւնը, որուն հիմքը՝ «հայր»
հասկացութիւնը, իսկ անոր իսկա-
կան առաքելութիւնը՝ ժողովուր-
դին համար իսկական «հայրիկ»
մը ըլլալու, բազմազանութեան մէջ
միութիւն ստեղծելու, ազգին հո-
գեւոր աւանդն ու ինքնութիւնը

պահպանելու, սրբութեան մը զգա-
ցողութիւնը առթելու եւ հոգեկան
բարձր կեանքի մը երաշխիքը տա-
լու գաղափարը կը կազմէ:

Անդրադառնալով ազատագ-
րութեան աստուածաբանութեան,
որուն հանգամանօրէն անդրադար-
ձած էք ոչ միայն առկայ, նաեւ այլ
յօդուածներու մէջ, եղո՞ւկ, որ քան
հեռու են մեր եկեղեցականներէն
շատեր՝ իւրացնելու համար քրիս-
տոնէական եւ ընկերային շարժու-
մին ամբողջապէս հիմք հանդիսա-
ցող այդ գաղափարախօսութեան
վեհութիւնը՝ կիրարկելի դարձնե-
լով զայն մեր ազգային-եկեղեցա-
կան կեանքին մէջ: Հազար ափսոս,
որ վերջին ժամանակներուն, տար-
բեր շարժառիթներէ մղուած, պահ-
պանողական ջղուտ ուղղութիւն
մը որդեգրեց յատկապէս մեր արե-
ւելեան կղերը, որ ճուճի իրական
հենք, այլ միանգամայն արուես-
տական եւ քաղաքական որոշակի
շրջանակներէ իրեն թելադրուած
բռնազբօսիկ երեւոյթ մըն է:
Դժբախտաբար, ներկայի հեղձու-
ցիչ եւ վտանգաւոր պայմաններուն
մէջ, առ այժմ, Հայց. Առաք. Եկեղեցիին ներս կարելի չէ բարե-
նորոգչական կամ հոգեւոր կեանքի
վերածնութեան վերաբերեալ գար-
գացում մը ակնկալել:

Բնականաբար, ազգի շինու-
թեան եւ բարօրութեան գործին
մէջ եկեղեցիին առաջնահերթ պար-
տականութիւններն են մին է համա-
գործակցիլ նաեւ պետութեան հետ՝
«տո՛ւք գկայսերն՝ կայսեր, եւ զԱս-
տուծոյն՝ Աստուծոյ» (ՂԿ. Ի, 26)
սկզբունքով: Եկեղեցին պէտք է
ըլլայ խօսող խիղճը պետութեան եւ
բարոյական գերազանց հեղինա-
կութիւնը հասարակութեան: Խար-
խափումներու եւ սայթաքումներու

առթիւ՝ եկեղեցին պէտք է ըլլայ
թելադրող, ազդարարող եւ խրա-
տող ուսուցիչը իր պետութեան եւ
ժողովուրդին: Պետութիւնը՝ այդ
ես եմ եւ դուն, մենք բոլորս
միասնաբար կը կազմենք ու կը
ներկայացնենք թէ՛ մեր հայրենի-
քը եւ թէ՛ պետութիւնը: Բայց երբ
եկեղեցւոյ եւ պետական իշխանու-
թեան վերնախաւը մենատիրա-
կան եւ շահադիտական հասարա-
կաց հետաքրքրութիւններով կը
սերտաճի, եւ եկեղեցին կը դառ-
նայ ընդամենը միջոց մը օրուան
իշխանութեան ընկերային, քա-
ղաքական թէ՛ տնտեսական նպա-
տակներու հետապնդման, նաեւ՝
հլու կամակատարը անոր թելադ-
րանքներուն, եւ ոչ թէ հոգեւոր
հեղի-նա--կաւոր պաշտպանը ժո-
ղովուրդի ընդհանուր պահանջք-
ներուն, այդ ժամանակ եկեղեցւոյ
ցորենի բարի սերմին մէջ կ'ուռճա-
նայ պատակտող որոմը, անոր փրկա-
րար հացին հետ մահացու թթիւմը
կը շաղուի, իսկ բանին կենաց
քարոզչութեան տեղ՝ ժանգաճոտ
պղինձ եւ սեւաթուր կապար կը
ներարկուի սրբութեան օծումով
աւլցուն անոր դասէն ներս:

Հարկ է կայ երկարօրէն ման-
րամասնելու, թէ՛ ինչ սոսկալի նե-
ղութիւններ եւ, իր դարաւոր գո-
յապայքարի ընթացքին, ծանրա-
ծանր խաչեր կրելու ստիպուած
եղած է հայ ժողովուրդը: Սակայն
աղէտներու բոլոր դարերուն, նոյ-
նիսկ Յեղասպանութեան եւ հայրե-
նազորութեան մէջ, ան պահանջած
է իր ոգեղէն եւ թանկագին գոհարը՝
Հայ Եկեղեցին, որուն սրբազան
խորանէն ան միշտ լսած է յարու-
թեան յաղթական պատգամը: Պո-

Շար.ը էջ 19

Arabic Night
Սրբապատկան Երեկոյ
Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԷՅԻԼԻ Ս.Դ.Հ.Կ.
ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ
Երեկոն կը խաճխաւարէ՝
D.J. Alex • Darbuka Specialist Mark Elkhoury
ՀԱԾԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ
ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 29, 2017
Երեկոյեան ժամը 8:00-ԷԳ սկսեալ
Raffi's Banquet Hall սրահին մէջ
3887 E. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107
Մուտքի անո՛ր \$50
Տոմսեր ապահովելու համար հեռագրաբար
Կարօ (818) 913-4024 • Աւօ (818) 913-9311

ԵՐԵՔ ԱՊՐՈՒԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ. «ԻՐ ԱՆՈՒՆՈՎ ՊԵՏՔ Է ԿՈՉԵԼ»



ՊՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

«Խոստումը» ժապաւէնը կրցայ դիտել 8 Մայիսին, Պէյրութ: Մէկ կողմէ ապրեցայ յուզում, բայց նաեւ՝ հպարտութիւն: Յուզումը՝ Յեղասպանութեան ահաւորութեան, որ անգամ մը եւս զծուցեց մտքիս ու հոգիիս մէջ՝ իբրեւ ապրող իրականութիւն: Բայց «Խոստումը» ժապաւէնին առնչութեամբ յատկանշականը այն էր, որ չկային սարսափազդու եւ արիւնալի տեսարաններ, ինչպէս որ է պարագան մերօրեայ շարժանկարի շատ մը արտադրութիւններու մէջ: Կրցած էին Յեղասպանութեան «ահաւորութիւնը» ներկայացնել ոչ «ահաւոր» տեսարաններու միջոցով: Եւ նոյն այդ տեսարաններուն միջոցով կրցած էին Յեղասպանութեան իրողութիւնը, ֆիզիքական-հոգեկան եւ հոգեբանական ապրուած սարսափազդու ցաւը դուրս հանել: Եւ այս՝ հայուն ցաւը...

Եւ իւրաքանչիւր կերպարի հետ՝ հայ, թուրք, ամերիկացի կամ այլ, կեանքի իրական ապրուած փորձառութիւններու եւ զգացումներուն մէջէն կրցած էին դուրս բերել հայուն ողբերգութիւնը, բայց նաեւ՝ ապրելու վճռակամութիւնը:

Բայց կար նաեւ հպարտութիւնը: Նոյն այդ ցաւին մէջէն դուրս եկած ըլլալու իմ արդար հպարտութիւնս, թէ հայը կրցաւ մէջտեղ հանել նման իրագործում մը՝ տնտեսական մեծ ներդրումով, ու տակաւին, շատ մը դիւանագիտական հաշուարկումներով, ուր միջազգային հանրութեան կրցան ներկայացնել հայուն արդար իրաւունքը՝ Յեղասպանութեան իրողականութիւնը, այդ ալ համաշխարհային բեմահարթակին վրայ՝ շարժապատկերի արուեստի միջոցով:

Ժապաւէնը դիտելու յաջողօրէն օրը պէտք էր մեկնէի Ուաշինգթոն՝ Միացեալ Նահանգներու մայրաքաղաք, ներկայ գտնուելու քրիստոնէական միջազգային մեծ համագումար-համաժողովի մը՝ նուիրուած կրօնական ազատութիւններու եւ քրիստոնէական եկեղեցիներու ու համայնքներու ներկայ օրերու ապրած ճգնաժամներուն: Կը մասնակցէին աւելի քան ութ հարիւր եւ քառասուն ներկայացուցիչներ, որոնք եկած էին հարիւր երեսուն տարբեր երկիրներէ, բայց համագումարը նոյնքան ներկայացուցչական էր, որովհետեւ կրցած էր ի մի հաւաքել տարբեր քրիստոնէական համայնքներու բարձրատիճան ներկայացուցիչներ՝ կաթողիկէ, ուղղափառ եւ աւետարանական, ներառեալ՝ պապական աթոռի պատուիրակը:

Համաժողովը թէեւ ընթացք

առաւ կրօնական ազատութիւններու եւ անոնց իրաւունքի եւ յարգումի անհրաժեշտութիւններուն վրայ լուսարձակ բանալով, բայց նաեւ՝ անոր ոչ համահասարակ իրարկումին: Շեշտը դրուեցաւ քրիստոնէական համայնքներու կրօնապահներուն եւ ահաբեկումներուն վրայ, մանաւանդ՝ միջինարեւելեան տարածաշրջանին մէջ:

Հայր Տուկլաս Ալպազի կուգայ իրաքէն: Ան քաղդէական համայնքի հոգեւոր հովիւ է, որ մինչեւ օրս լծուած է տքնաշան ծառայութեան՝ իր եկեղեցիին ու համայնքին համար: Կ'ապրի ու կը գործէ Պաղատարի մէջ: «Աւելի քան տասը օր առեւանգուած մնացի» նախադասութեամբ իր ելույթը սկսաւ հայր Ալպազի: Ան ներկայացուց իր տասը օրերու արգելակումը, ֆիզիքական, հոգեկան ու հոգեբանական այն ահաւոր շարժարանները, որոնց ենթարկուած էր: Ծայրայեղական ու ահաբեկչական խմբաւորումներ առեւանգած էին զինք: «Այս խմբաւորումները կը ձգտէին առեւանգել եկեղեցական առաջնորդներ, որպէսզի աւելիով վախ եւ անորոշութիւն յառաջանեն հաւաքականութիւններու մէջ»:

Հայր Ալպազի ներկայացուց իրաքի ներկայ իրավիճակը՝ իր տարբեր կնճռոտած երեւոյթներով: Միջհամայնքային տարբեր բախումները՝ փոքրամասնութիւններուն, քրիստոնէայ թէ՛ այլ, կրած շարժարանները եւ տեղահանութիւնները, լուսարձակի տակ առնելով այն, թէ ինչպէ՛ս քրիստոնէայ համայնքը կը նուազի, եւ մարդիկ ստիպուած կ'ըլլան լքելու իրենց տունն եւ երկիրը:

«Եթէ պիտի ընտրեմ սիրելը, թէ լքելը, ես կ'ընտրեմ սիրելը», ըսաւ ան: «Կը սիրեմ իմ հայրենիքս՝ Իրաքը, եւ կ'ուզեմ կառչած մնալ անոր, որովհետեւ քրիստոնէայ եկեղեցին այս երկրին ծնունդն է», շարունակեց ան:

Հայր Ալպազի մէջ եթէ մէկ կողմէ նշմարելի է նուիրուածութիւնը, բայց նաեւ՝ ինքնավստահ եւ քաջ կղերականի նկարագիրը: Ան չվարանեցաւ իր խօսքը ուղղել ամերիկեան հասարակութեան՝ նոյնինքն անոր մայրաքաղաքին մէջ. «Արթնցի՛ր, Ամերիկա...»: Արթնցի՛ր տեսնելու համար, թէ ինչ տեղի կ'ունենայ իրաքի մէջ, եւ թէ ինչպէ՛ս երկիրը պառակտուած եւ քառասուն վիճակի մը մէջ յայտնուած է, իսկ փոքրամասնութիւններ, յատկապէս քրիստոնէաններ, ինչպէ՛ս հալածանքի կ'ենթարկուին...

Համաժողովին կարեւոր անդարձներէն մէկն էր Միացեալ Նահանգներու փոխնախագահ Մայք

Փենսիլի ելույթը. ան ընդգծեց միջինարեւելեան տարածաշրջանի իրադարձութիւններուն մէջ կրօնական ազատութիւններու չգոյութիւնն ու ոտնակոխումը՝ փոքրամասնութիւններու նկատմամբ հալածանքներն ու անոնց կրած գրկանքները լուսարձակի տակ առնելով: Փոխնախագահը անդրադարձաւ քրիստոնէայ համայնքներուն իրավիճակին եւ ընդգծեց, որ Ամերիկայի ներկայ վարչակարգը մօտէն կը հետեւի եւ իրագեկ է բոլոր իրականութիւններուն: «Մենք մօտէն կը հետեւինք բոլոր դժբախտութիւններուն եւ այն գրկանքներուն ու հալածանք-ջարդերուն, որոնց ենթակայ են համայնքային փոքրամասնութիւններ Միջին Արեւելքի մէջ», ըսաւ ան ու շարունակելով. «աւելցուց՝ «ժամանակն է, որ Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող այս բոլոր աղէտները իրենց անունով կոչուին: Եւ այդ անունը ցեղասպանութիւն է», եզրափակեց փոխնախագահը...»:

Եթէ զօրաւոր հաստատում մըն էր այն, որ փոխնախագահը կատարեց, եւ այդ ալ՝ բաւական ինքնավստահ, բայց չուշացաւ իմ մէջս ծնած հարցումը: «Բայց արդեօք ե՞րբ Հայոց ցեղասպանութիւնը եւս պիտի կոչուի իր անունով...»:

Բաւական «յագեցած» էի ժողովներէն: Եթէ մէկ կողմէ կար շատ տեղեկութիւն, ողբերգութիւն եւ զգաստութիւն՝ եկեղեցական մեծ թիւ ներկայացնող համաշխարհային համակարգի մը կողմէ, բայց նոյնքան նաեւ սպառօրէջ էին այդ բոլորը: Սպառօրէջ, որ կը յոգնեցնէ մարդուն միտքն ու հոգին:

Բայց կար նաեւ պատեհ առիթը ժողովի ընթացքին բաժնեկցելու իմ՝ հայուն ցաւը: Եւ ակնարկելով շրջանի տագնապներուն ու մտահոգութիւններուն, նաեւ այն բոլոր «սպանդներուն», որոնք կը

շարունակուին տարբեր համայնքներու հաշուոյն, ըսի: «Եթէ քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ հայ ժողովուրդի հանդէպ, ընդունուէր եւ դատապարտուէր ըստ պատշաճի, պիտի կանխուէին եւ հաւանաբար չքայտը մարդկութեան հանդէպ կրկնուող իրերայաջորդող դժբախտութիւնները՝ տարիներէ ի վեր եւ մինչեւ օրս»:

Ուաշինգթոնի օդակայանէն կը վերադառնամ Պէյրութ՝ մտորումներու մէջ սուզուած: Յոգնած, սպառած եւ երեւի քիչ մըն ալ՝ գայլոյթով լեցուն մտորումներ, թէ ինչո՞ւ մինչեւ այսօր կայ «քաջբուքը» հայուն ցեղասպանութեան եւ զայն իր ճշգրիտ «անունով» (չ)կոչելու յանդգնութիւնը:

Եւ կը վերադառնամ «Խոստումը» ժապաւէնին եւ այն բոլոր կերպարներուն, զորս ժապաւէնը կրցած էր ստեղծել: Աննան, որ Ֆրանսա ապրած էր, բայց «զօրաւոր հայ է»... Միքայէլը, որ Յեղասպանութեան բոլոր դժբախտութիւնները ապրել է եւ որբերու խումբին հետ հասած էր Միացեալ Նահանգներ, եւ որ իր վերապրումի նոր կեանքին ընթացքին, Յեղասպանութենէն ու արհաւիրքէն տարիներ ետք, արդէն չափահաս դարձած որբերուն դիմաց վճռականօրէն յայտարարեց. «Բայց մենք այսօր կ'անք եւ հո՛ս ենք»:

Օդակայանին մէջ, յոգնած՝ մտորումներէս, դարձեալ տեսայ, թէ հայը այսօր տակաւին «կ'այ ու հո՛ս է», եւ եթէ «հոս»-ը քիչ մը ամէն տեղ է, բայց հայը կեցած է «զօրաւոր»: Եւ «հոսկէ» թէ «հոնկէ» կը շարունակէ «արթնցնել» համաշխարհային համակարգը՝ գոչելով, թէ հայուն ցաւը պէտք է

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ ԱՉԱՊԱՀԵԱՆԻՆ:

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
vamedia@yahoo.com

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2016-2017 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՀՈՒՆՁՔԸ

ԼԻՆՏԱ ՊԱՆՏԻԼԵԱՍ

Հայ Քոյրերու Վարժարանը այս տարի եւս յաջողութեամբ ամբողջացուց իր ծրագիրներն ու

Տնօրէնուհի Քոյր Լուսիա Հանդիսութիւնը փակեց շնորհաւորելով բոլոր ծնողները, շնորհակալութիւն յայտնելով բոլոր ուսուցիչներուն, որոնց հետեւողական



յայտագրերը՝ հաւատարիմ մնալով Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան նշանաբանին՝ դաստիարակել հայ մանուկն ու պատանին ջամբելով հայեցի կրթութիւն եւ քրիստոնէական դաստիարակութիւն:

աշխատանքին արդիւնքն էր այս եզակի հանդիսութիւնը:

Հինգերորդ դասարանի աշակերտները դպրոցական վերջին օրը Յունիս 22, 2017ին ստացան իրենց վկայագրերը. անոնք պաշտօնական հանդէսի պատմուճան-ներով մուտք գործեցին սրահ, եւ բեմահարթակին վրայ հանգաման-օրէն իրենց տեղերը գրաւելով երգեցին ու արտասանեցին հայոց լեզուի նուիրուած երգեր, ոտանաւոր-ներ եւ պանծացուցին հայ լեզուն ու հայրենիքի սէրը հպարտութեան զգացումով լեցնելով ծնողներուն եւ ուսուցիչներուն



11 Յունիս 2017-ը Շաբաթ առաւօտ տեղի ունեցաւ Մանկապարտէզի հանդէսը վարժարանիս Դանիէլեան սրահին մէջ, ներկայութեամբ վարժարանիս Առաքինագարդ Քոյրերուն, հիւրերու ծնողներու, մեծ ծնողներու եւ ուսուցիչներու:

հոգիները, օրուան պատգամը փոխանցեց իրենց դաստիարակը Կարէն Սանթրիկեան:

Ուրախութիւնը ամէնուր էր, վկայեալները իրենց նախակրթարանի շրջանը աւարտելու գոհունակութիւնն ու միջնակարգ բարձրանալու մեծ երազով հատեցին կարկանդակը ու մեկնեցան:

Հանդիսութիւնը սկսաւ Մանկապարտէզի Տնօրէնուհի Սոնա Գազանճեանի բարի գալուստի խօսքով, Ան նաեւ ծնողներուն ներկայացուց տարեկան իրենց զաւակներու կատարելագործած ծրագիրները եւ հաստատեց, որ անոնք՝ աւստրուան վկայեալները արդէն իսկ պատրաստ են երթալու նախակրթարանի առաջին դասարան:

Կը շնորհաւորենք վկայեալները որոնք տակաւին միջնակարգի երեք տարիներու պիտի մնան վարժարանէն ներս, եւ կը մաղթենք յարատեւ յաջողութիւն:

Ութերորդ դասարանի պարագային, հանդէսի նախօրեակին Կիրակի Յունիս 4, 2017-ին անոնք ունեցան իրենց վերջին աշակերտական պատարագը՝ Կլենտէյլի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցու մէջ, օրուան պատարագիչն էր Արհիպատիւ Տէր Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեան Առաջնորդ հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Կաթողիկէ Հայոց: Աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին Ս. Պատարագին՝ Աւետարանի ընթերցուածներով որ ընթերցեցին երկլեզու Սէրլի էքմէքճեան եւ Իգապէլլա Խաչիկեան եւ Սրտի խօսքերով՝ Նարէ Թէրզեան եւ Մէրի Ջաքօ, ուրիշներ խնդրանքներ վեր առաքելով եւ խաղաղութեան ողջիւն բաշխելով

Այս տարուան հանդէսը, ինչպէս միշտ խանդավառ էր ու հոգեպարար նուիրուած Հայաստանի, Արցախի եւ Հայոց Բանակի 25 ամեակին: Այդ խորագրի տակ մանկապարտէզի փոքրերը ներկայացուցին Սիրուշոյի Զարթօնքը ընկերակցութեամբ հայկական մարտական պարերու, առաւել Հայ Արեւ երգախառն պարը՝ ներկաներու խանդավառութիւնը հասցնելով իր գագաթնակէտին:

Շրջանաւարտները ստացան իրենց վկայականները մեծ ծափողջիւններով եւ գոհունակութեամբ, անոնք արդէն իսկ անցան նախակրթարան փակելով մանկական աշխարհի դրները:



հաւատացեալներուն այսպիսով անոնք խուստացան հաւատարիմ մնալ Քրիստոնէական կրօնքին եւ որպէս հայ քրիստոնէայ շարունակել իրենց ճամբան հետեւելով իրենց նախա-հայրերու աւանդին:

զոյգ քայլերգներու մեկնաբանութիւնը եւ այսպիսով ընթացք առաւ ութերորդ դասարանի Հայ Քոյրերու Վարժարանէն ներս տասնմէկամեայ իրենց ուսումնական կեանքի վերջին արարը: Ընթացքին տեղի ունեցան պաշտօնական խօսքեր անգլերէն եւ Հայերէն՝ ներկայացուած Տնօրէնուհի Առաքինագարդ Քոյր Լուսիայի եւ Դաստիարակներ՝ Լինտա Գանտիլեանի եւ Ուրիլիամ Պասէթի կողմէ, իսկ աշակերտութեան խօսքը ներկայացուած անգլերէն Անի Ժամկոչեան եւ Նիքօլ Քրաճեան, Հայերէն լեզուով ուղերձ կարդաց Լարա Քասախեան: Օրուան հիւր պատգամաբերն էր վարժարանի շրջանաւարտներէն բժշկուհի Գարոլին Թաշճեան, Ան վերջիշելով իր աշակերտական յիշատակները եւ օրինակներ տալով անոնցմէ յորդորեց աշակերտները ըսելով որ «Յաջողութիւնը կը սկսի այս վարժարանի գրասեղաններէն, ինչպէս որ ես իմ յաջողութիւնս կը պարտիմ Հայ Քոյրերու Վարժարանին. . . .»:

Օրուան պատարագիչը իր դաստիարակիչ քարոզով գիրենք յորդորեց ըլլալ պատուաբեր հայ քրիստոնէաներ եւ լաւ քաղաքացիներ:

Պատարագի աւարտին աշակերտներ, ծնողներ, հիւրեր եւ համայն հաւատացեալներ հիւրասիրուեցան եկեղեցու սրահը:

Յունիս, 11 2017 Կիրակի յետմիջօրէին, տեղի ունեցաւ աւարտական հանդէսը վարժարանիս Դանիէլեան սրահին ներս, ուր մեծ թիւով ծնողներ, հիւրեր վարժարանիս առաքինագարդ Քոյրերը եւ ուսուցչական կազմը, բոլորը ներկայ էին վերջին հրաժեշտը տալու վկայուող 21 աշակերտ աշակերտուհիներուն:

Հանդիսութիւնը ընթացք առաւ երբ իրենց վկայականի պատմուճաններով եւ ծնողներու ծափողջիւններով հպարտօրէն մուտք գործեցին սրահ եւ բեմահարթակին վրայ շարուելով Տէրունական աղօթքով սկսան հանդիսութիւնը, որուն յաջորդեց

Հանդիսութիւնը շարունակեցաւ երկլեզու խմբերգներով, որուն դաշնամուրի վրայ կ'ընկերակցէր

Շար.ը էջ 18

ST. GREGORY ARMENIAN APOSTOLIC CHURCH
 Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՒՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ
 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Presents
FAMILY FIRST FIRDAY NIGHT
 Friday, July 7 2017 @ 7:00 P.M.
 2215 East Colorado Blvd., Pasadena

LATINO NIGHT

Միացե՛ք Մեզի Լատինական Գիշերային Հանդիսութեան
 Join Us & Enjoy LATINO Music and Food!

For Reservations Please Call:
 ALICE: (818) 606-6606
 VAHE: (562) 715-8730
 VERA {church office}: (626) 449-1523

DONATION: \$25.00

ՃԵՄԻԼԵ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ՄԱՅՐՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻ

Մայիս 2017-ի երեկոյան ժամը 5-ին ձէմիլէ իրազատուրեան ֆիլիքսպէս բաժնուերով իր սիրելիներէն, ցաւի ու մորմոքի ապրումներու մէջ թողեց իր գաւակներն թողներն ու համայն հարազատները:



Խորապէս կը ցաւակցինք հանգուցեայի հարազատներուն:

Խունկ ու աղօթք իր անմեռ հոգիին:

Յիշատակը անմառ մնայ սիրելի ձէմիլէ: Հողը թեթեւ գայ վրադ ու ննջես հանգիստ խաղաղութեան ներքեւ:

Թող որ Աստուած երանութեան մէջ պահէ քու լուսաւոր հոգիդ:

ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ

Տիկ. ձէմիլէ ծնած է 1924-ին Հայկէստան հարիւր յիսուն քիլոմէթր հեռավորութեան վրայ գտնուող Եագուպի կոչուած գիւղաքաղաքին մէջ:

1946-ին ամուսնացած է Անդրանիկ Տոնոյեանի հետ ու բախտաւորուած է չորս մանչ եւ մէկ դուստրով. եղած է համեստ, կիրթ, համամարդկային արժէքներ ունեցող հոգատար մայր, դաստիարակելով իր գաւակները մարդասիրութեան, գլխարտութեան եւ գոհաբերութեան հիմքերու վրայ, հասցնելով զանոնք բարձր դիրքերու, որպէս բժիշկ, կրթական մշակ եւ բարձր գնահատանքի արժանի անձնաւորութիւններ:

Անողջ մահը մեզմէ խլեց զայն այր, սակայն իր յիշատակը պիտի մնայ վառ ու պայծառ մեր սրտերու մէջ:

Սփիւռքում Երիտասարդ Հայ Հետազոտողների Առաջին Առցանց Գիտաժողով

Աշխարհի բուհերում վերջին տարիների ընթացքում աճել է հայ գիտական մտքի ներկայութիւնը: Տարբեր բուհերում աշխատող եւ սովորող երիտասարդ գիտնականներին միաւորելու նպատակով, եւ նրանց միջեւ կապեր ստեղծելու համար 2017թ. Յունիսի 22-ից 23-ը Չինաստանի Հայկական համայնքը կանցկացնի Սփիւռքում՝ երիտասարդ հայ հետազոտողների առաջին առցանց գիտաժողովը:

Չինաստանի Հայկական համայնքն առցանց գիտաժողովների կազմակերպման մեծ փորձ ունի: Նորագոյն տեխնոլոգիաների ներգրավմամբ այն արդէն կազմակերպել է Չինաստանում գործող հայ հետազոտողների եւ ուսանողների երեք գիտաժողով: Այս գիտաժողովների շնորհիւ միաւորուեցին Չինաստանի տարբեր քաղաքներում գտնուող հայ ուսանողներն ու հետազոտողները: Գիտաժողովի արդիւնքում կապ ստեղծուեց հայ ուսանողների ու գիտնականների միջեւ, կազմաւորուեց հայ հետազոտողների թիւմը, որը Չինաստանում եւ այլ երկրներում մասնակցում է գիտական միջոցաւորումներին, ներկայացնում է հայկական գիտական միտքը: Գիտաժողովին ներկայացուած հետաքրքիր աշխատանքները տպագրուեցին: Գիտաժողովը մեծ հետաքրքրութիւն առաջացրեց, թէ՛ Հայաստանում, թէ՛ սփիւռքում, լուսաբանուեց լրատուամիջոցների կողմից: Գիտաժողովին ներկայացուած հետաքրքիր աշխատանքները տպագրուեցին: Քանի որ այս ամէնամեայ գիտաժողովին մասնակցելու ցանկութիւն յայտնեցին աշխարհի տարբեր երկրներում գործող հայ հետազոտողները՝ Չինաստանի Հայկական համայնքի գիտական խորհուրդը որոշեց կազմակերպել Սփիւռքում՝ երիտասարդ հայ հետազոտողների առաջին առցանց գիտաժողովը, որը հնարաւորութիւնն կտա ընդլայնելու գիտաժողովի աշխարհագրութիւնը:

Գիտաժողովի մասնակցութեան պայմանները

Գիտաժողովին կարող են մասնակցել ներկայումս Սփիւռքում գիտական աշխատանք կատարող հետազոտողները, սովորող հայ ուսանողները: Գիտաժողովը կանցկացուի առցանց տարբերակով, որպէսզի միաւորի Սփիւռքում գտնուող հայերին: Գիտաժողովին մասնակցելու համար կարելի է ներկայացնել գիտական յօդուածներ, մագիստրոսական, թեկնածուական թէզերի շուրջ աշխատանքներ, վերլուծական աշխատանքներ: Աշխատանքային լեզուն՝ հայերէն, անգլերէն, ռուսերէն: Աշխատանքների արտարկտները պէտք է լինեն 300-ից 1000 բառ: Իւրաքանչիւր մասնակից հետազոտութիւնը ներկայացնելու, հարց ու պատասխանի համար կունենայ 15 րոպէ: յօդուածը ներկայացոււմ է A4 ձևաչափի թղթի վրա՝ էլեկտրոնային տարբերակով, տառատեսակը՝ հայերէնի անգլերէնի եւ ռուսերէնի համար՝ Sylfaen, տողերի միջեւ հեռավորութիւնը՝ 1,5, տառաչափը՝ 12, միայն վերնագիրը՝ 14 տառաչափով: Նշէ՛լ հեղինակի անունը, ազգանունը, բուհը: Աշխատանքներն ուղարկել, ինչպէս նաեւ հարցերի դէպքում գրել Մհեր Սահակեանին (mhersahakyan@chinastan.org էլ. հասցէով): Աշխատանքների արտարկտների ներկայացման վերջնաժամկէտն է Յունիսի 22-ը: Գիտաժողովը կը մեկնարկի Յունիսի 22-ին, Պեկինի ժամանակով՝ 21:00: Մինչեւ Յունիսի հինգը հաստատուած մասնակիցները կը տեղեկացուեն գիտաժողովի անցկացման տեխնիկական ձեւաչափի մանրամասներին: Գիտաժողովին որպէս դիտորդ մասնակցելու մանրամասներին կարելի է ծանօթանալ՝ գրելով contact@chinahay.com էլ. հասցէին:

Գիտաժողովը կազմակերպուել է Չինաստանի Հայկական համայնքի եւ Չինաստան-Եւրասիա քաղաքական ու ռազմավարական խորհրդի կողմից: Գիտաժողովի անցկացման օժանդակում է ՀՀ Սփիւռքի նախարարութիւնը: Գիտաժողովի գործընկերներն են «Նորավանք» հիմնադրամն ու ԱՐՄԱԿԱԴ-ը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Շարունակուած էջ 14-էն

ուստախօսութիւն մը պիտի չընեն՝ թէ համոզուած եմ ըսելու, որ Լուսաւորչի կանթեղէն առկայծող խորախորհուրդ առաքելութեան մը սահմանուած է հայը: Մարդկային ցեղին օրրանը ըլլալու աստուածաշնչական պատումը, դեռ շատ աւելի վաղ ժամանակներէն, կու գայ զինք մենաշնորհելու առանձնայատուկ հանգամանքով մը, որ անգամ մը եւս կ'ամրագրուի Դ. դարուն սկիզբը, երբ իր այդ նախախնամական առաքելութիւնը կը շողախուր Աւետարանի լոյսով:

Բայց իր ապագայ տիեզերապատմական դերին ու կոչումին նախապատրաստուելու եւ զայն արիւրաբար ստանձնելու համար՝ հայ ժողովուրդը պէտք ունի հաւատարիմ եւ նախանձայոյց գործիչներու, նուրբաձայն տեղական այրերու, առինքնող հայրերու, սրբակենցաղ եկեղեցականներու, հոգեւորական լուրջ քարոզիչներու եւ օժեալ քահանաներու:

Հարկ է, որ ամէն մի հայ գիտակցի եւ գերազանցապէս բարձր գնահատէ իր պատմութեան եւ նախահայրերուն փոխանցած այս անզուգական ավանդը:

Այսօր, ցաւալի է, որ ժողովուրդին կարեւոր մէկ մասը անդարձ խրած է ծիսապաշտական (կնունք, հարսանիք, թաղում, հոգեհանգիստ) սովորութիւններու մէջ, իսկ միւս հատուածը դարձած է եկեղեցւոյ նկատմամբ անտարբեր, կամ առաւելագոյնը՝ զայն կը դիտէ իբրեւ ազգային-պատմական կառոյց մը, չըսելու համար՝ ընդամէնը յուշարձան մը, բայց ոչ՝ կենդանութիւն եւ յոռաշրջիմութիւն ստեղծող անհրաժեշտութիւն մը:

Այժմ վեհագոյն խնդիր մը կայ հայ ժողովուրդի աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդներուն առջեւ: Պէտք է հայը վերստին երկիւղած դարձնել իր ազգային ավանդին եւ սրբութիւններուն, իր ներկայ յանձնառութիւններուն մէջ եւ ապագայ առաքելութիւններուն դիմաց՝ քաջարի ժողովուրդ մը. ահա՛ փառաւոր կոչումը նաեւ հայ աշխարհիկ գործիչին եւ հոգեւորականին, որոնք պէտք է գործեն՝ ազգերու ընտանիքին մէջ դարձնելու համար հայը

նախախնամեալ, ստեղծարար, յառաջողէմ եւ օրինակելի ժողովուրդ մը:

Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը, որուն սրտագին կ'անդրադառնայ Ոսկան Մխիթարեան, նաեւ Դուք, հական պահանջք մըն է: Իրողութեան մէջ ան ոչ թէ պարզապէս ներեկեղեցական, այլ ազգային խնդիր մըն է: Այսօր ազգը, իր կարգ մը առաջնահերթութիւններու կողքին, աւելի քան երբեք պէտք ունի նաեւ իր հոգեւոր մարզին՝ եկեղեցիին բարեկարգութեան, որ նուազ կարեւորութիւն չի ներկայացնէր՝ քան իր ֆիզիքական ապահովութիւնն ու բարգաւաճումը: Մին կ'ամբողջացնէ միւսը, կամ փոխադարձաբար՝ մին կը պայմանաւորէ միւսին զարգացումն ու հզորացումը:

Այլ հարց է, թէ ատա՞կ է մեր եկեղեցականութիւնը նման կարեւոր խնդիր մը դնելու իր հայեցակարգին վրայ: Այսօրուան մակերեսայնօրէն կատարուած փորձերը, որոնք փաստացիօրէն տեսանք վերջին եպիսկոպոսական ժողովին առթիւ, Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ դէմքին վրայ ծիծաղելի, նոյնիսկ նուաստացուցիչ շարունակներ էին միայն, գուրկ՝ անձկալքեաց ցանկութեան է եւ լուրջ մօտեցումէ:

Միեւնոյն ատեն, բարեկարգութիւնը, որ կրնայ մեր ազգային-եկեղեցական կեանքին մէջ պատմական չափազանց նշանակալից պատհանութիւն մը դառնալ, պէտք չէ դուրսէն Հայ Եկեղեցիի մարմնոց վրայ պատուաստել: Ան պէտք է ըլլայ բնական ներքին զարգացումը եւ անյետաձգելի պահանջք մեր ազգին, որուն պարտի համակ ընթացք տալ մեր եկեղեցականութիւնը: Բարեկարգութիւնը չի նշանակեր ջնջել եւ կազմալուծել այն ամէնը, որ հայոց պատմութիւնը ստեղծագործած եւ ազգին թափած արիւնը իր սրբազան ավանդութիւններով նուիրագործած է: Այլ՞ մենք պէտք ունինք լուրջ ու հիմնական վերանորոգումի մը, ներքին եւ արտաքին մաքրագործումի մը, մասնաւորաբար վարչական եւ ծիսական մարդերէն ներս, ուր Հայ Եկեղեցին միաձնա՞ջ լուսոյ խորան մը մնալով հանդերձ՝ պահէ իր ազգային դրոշմն ու ժողովրդավարական նկարագիրը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:-----
Address:-----
City:----- State:----- Zip Code:-----
Country:-----

Tel :----- Email:-----

ՅՈՎՅԱՆՆԵՍ ԲԱԶԿՈՎԸ՝ ԵՐՈՊԱՅԻ ԶԵՄՊԻՈՆ

Ուկրաինացի խաղերի քաղաքում աւարտուող բռնցքամարտի Եւրոպայի առաջնութիւնում Հայաստանը նուաճեց մէկ ոսկէ մեդալ: Չեմպիոնի տիտղոսն առաջին անգամ նուաճեց Յովհաննէս Բազկովը:



64 կգ քաշային կարգի եզրափակչում Յովհաննէս Բազկովը մենամարտեց անգլիացի Լյուկ Մաքորմակի հետ եւ յաղթանակ տարաւ մրցավարների միաձայն որոշմամբ: Ծանր մենամարտում հայ բռնցքամարտիկն արժանացաւ հինգ մրցավարների հաւանութեանը: Հինգն էլ աւելի բարձր գնահատեցին Բազկովի հարուստները:

Հայաստանի միւս ներկայացուցիչները պայքարից դուրս էին մնացել առանց մեդալ նուաճելու:

7 տարի Հայաստանը չէր ունեցել բռնցքամարտի Եւրոպայի չեմպիոն Հրաչիկ Զավախեանի յաղթանակից յետոյ:

ՅԵՆՐԻՆ ՄԻԽԱՅԻՆ. ՄՏԱԾՈՒՄ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԱՎԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» եւ Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը ֆեյսբուքեան տեքստային ասուլիսում պատասխանել է երկրպագուների բազմաթիւ հարցերի:



«Ինձ համար բոլոր ժամանակների լաւագոյն խաղացողը Զիլզանն է: Ինձ միշտ դուր է եկել նրա խաղը: Ես միշտ սիրել եմ ֆուտբոլը, հայրս եղել է իմ ներշնչանքի աղբիւրն ինչպէս ֆուտբոլում, այնպէս էլ կեանքում:

Մտածում եմ Հայաստանում ֆուտբոլի ակադեմիա բացելու մասին եւ շատ կը ցանկանայի ապագայում հիմնել ակադեմիա, որպէսզի հայ մանուկներին փոխանցեմ մեծ ֆուտբոլի իմ փիլիսոփայութիւնը»:

Ֆեյսբուքի օգտատէրերից մէկին հետաքրքրում է, թէ որ խոհանոցն է նախընտրում Հենրիխ Մխիթարեանը: Նա սիրում է հայկական եւ իտալական խոհանոցը:

«Մանչեսթեր Եունայթեդում» շատ գեղեցիկ գոլեր եմ ունեցել: Ամենագեղեցիկը թերեւս «կարիճ հարուստն» էր: Բայց այս մրցաշրջանի ամենակարեւոր գոլն ինձ համար Եւրոպայի լիգայի եզրափակիչում խփածս գոլն է»:

Ապագային վերաբերող հարցերին Հենրիխ Մխիթարեանը ոչ յստակ պատասխաններ է տալիս: Օրինակ՝ օգտատէրերից մէկին հետաքրքրում է, թէ որտեղ եւ ինչպէս է իրեն պատկերացնում հայ ֆուտբոլիստը 15 տարի անց.

«Ես դեռ չեմ մտածել, թէ ինձ հետ ինչ կը լինի տարիներ անց, դեռ չեմ մտածել կարիերայի աւարտի մասին: Չգիտեմ, որտեղ կը լինեմ այդքան ժամանակ անց: Կարծում եմ, դեռ երկար տարիներ կը շարունակեմ խաղալ:

«Մանչեսթեր Եունայթեդում» ինձ գոլում եմ ինչպէս ընտանիքում: Իսկապէս այս թիմը կարծես մի ընտանիք լինի: Բոլորը միմեանց սիրում են:

ՄԵՍԻՆ՝ ԱԲԱՐՏՈՒԱԾ ՄՐՑԱՇՐՋԱՆՈՒՄ «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ» ԼԱԲԱԳՈՅՆ ԽԱՂԱՑՈՂ

Արգենտինացի Լիոնել Մեսին 5-րդ անգամ ճանաչուել է «Բարսելոնայի» լաւագոյն խաղացող: Անցած մրցաշրջանի արդիւնքներն ամփոփել են կատալոնացի լրագրողները, որոնք ակումբի հետ համատեղ ամէն մրցաշրջանի աւարտից յետոյ որոշում են թիմի ամենաարժէքաւոր խաղացողին:

Մրցանակը շնորհուով է 2010 թուականից եւ Ալբո Ռովիերայի յիշատակին է (մահացել է 37 տարեկանում): Նա «Բարսելոնայի» նախկին տնօրէն Նոսթալ Լուիս Ռովիերայի որդին է եւ զոհուել է 2009 թուականին տեղի ունեցած ավտովթարում:

Մեսին այս մրցանակին արժանացել է նաեւ 2010-ին, 2012-ին, 2013-ին ու 2015-ին: 2011-ին մրցանակը ստացել է էրիկ Աբելդալը, 2014-ին՝ Խավյեր Մասկերանոն, 2016-ին՝ Լուիս Սուարեսը:

Անցած մրցաշրջանում Մեսին ակումբային 50 հանդիպումներում խփել է 53 գոլ, կատարել 11 գոլային փոխանցում:

ՍԻՄՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏՐԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԶԵՄՊԻՈՆ

Օլիմպիական խաղերի արծաթէ մեդալակիր ծանրորդ Սիմոն Մարտիրոսեանը դարձաւ աշխարհի երիտասարդական առաջնութեան չեմպիոն: +105 կգ քաշային կարգում Մարտիրոսեանը երկամարտում գրանցեց 426 կգ արդիւնք:



Հայ ծանրորդը երկու վարժութիւնում էլ ալ ուժեղագոյնն էր: Պոկոմում նա բարձրացրեց 191 կգ, իսկ հրումում՝ 235 կգ:

Հրում վարժութիւնում Սիմոն Մարտիրոսեանը վերջին մտնեցումով ռեկորդի էր յաւակնում, սակայն նրան մի փոքր չբաւականացրեց 246 կգ-ը զլիսավերելու պահելու համար:

Այսպիսով, Թոկիոյում աւարտուեց աշխարհի երիտասարդական առաջնութիւնը: Հայ ծանրորդները նուաճեցին մէկ ոսկէ եւ երկու բրոնզէ մեդալներ:

Երրորդ մրցանակակիր էին դարձել Սոնա Պողոսեանը (75 կգ) եւ Սամուէլ Գասպարեանը (105 կգ):

ԿՈՆՖԵՂԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԳԱԻԱԹ. ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՉԻԼԻՆ, ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՆ ՈՒ ՄԵՔՍԻԿԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓՈՎԿԻՉՈՒՄ ԵՆ

Ռուսաստանում ընթացող ՖԻՖԱ-ի Կոնֆեդերացիաների գաւաթի 8-րդ խաղարկութիւնում Եւրոպայի կիսաեզրափակիչի ուղեգիր նուաճեցին աշխարհի գործող չեմպիոն Գերմանիայի հաւաքականն ու Ամերիկայի գաւաթակիր Չիլիի թիմը:



Խմբային փուլի վերջին՝ երրորդ տուրում գերմանացիները Սոչիում 3:1 հաշուով յաղթեցին կամերունցիներին, իսկ Չիլիի հաւաքականը Մոսկուայում ոչ ոքի խաղաց աւստրալացիների հետ՝ 1:1:

Գերմանիայի հաւաքականը 7 միաւորով խմբում գրաւեց առաջին տեղը, իսկ կիսաեզրափակիչում Յունիսի 29-ին Սոչիում կը մրցի մեքսիկացիների հետ: 5 միաւոր վաստակած չիլիացիները փլէյ-օֆֆ դուրս եկան երկրորդ տեղով, իսկ եզրափակիչի ուղեգիրը Յունիսի 28-ին Կազանում կը վիճարկեն Եւրոպայի չեմպիոն Պորտուգալիայի հաւաքականի հետ:

Պորտուգալիայի եւ Մեքսիկայի հաւաքականները եւս նուաճեցին կիսաեզրափակիչում խաղալու իրաւունք:

Ա խմբի երրորդ տուրում Եւրոպայի չեմպիոն պորտուգալացիները վստահ յաղթանակ տարան Օվկիանայի չեմպիոն Նոր Զելանդիայի թիմի նկատմամբ՝ 4:0:

Հիւսիսային եւ Կենտրոնական Ամերիկայի չեմպիոն Մեքսիկայի հաւաքականը 2:1 հաշուով առաւելութեան հասաւ մրցաշարի կազմակերպիչ Ռուսաստանի թիմի նկատմամբ:

Պորտուգալիայի եւ Մեքսիկայի հաւաքականները վաստակեցին 7-ական միաւոր, գոլերի տարբերութեամբ առաջին տեղում են պորտուգալացիները:

ՄԱՐԿՈՍ ՊԻՉԵԼԻՆ ԿԱՐԻԵՐԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ ՍԱՌԴԵԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Մարկոս Պիչելին տեղափոխուել է Մաուրիտան Արաբիա: 32-ամեայ ֆուտբոլիստը մէկ տարուաչ պայմանագիր է կնքել «Ալ Շաբաբի» հետ եւս մէկ տարի երկարաձգելու հնարաւորութեամբ, հաղորդում է ակումբի մամուլի ծառայութիւնը:



Պիչելիի նախորդ ակումբը յունական «Քսանտին» էր, որի կազմում նա անցկացրեց 10 հանդիպում: